ՄԱՐԴԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՊՈԵՄՈՒՄ

ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

1

Մարդու «հայտնագործման» ուղղությամբ (որը, ինչպես հայտնի է, հանդիսանում է Վերածննդի դարաշրջանի արվեստների ու գրականության կարևորագույն նվաճումը) «Մատեան ողբերգութեան» պոեմում, այդ «աստվածաքնար» մատյանում տաղերի համեմատությամբ Նարեկացին ստեղծագործական մի նոր խիզախում կատարեց՝ մեծապես ընդարձակելով մարդ-արարածի բնութագրման շրջանակները, խորացնելով ու նոր, կարևոր գծերով հարստացնելով ու կատարելագործելով մարդկային էության գեղարվեստական վերծանման պատմափիլիսոփայական և գեղագիտական սկզբունքները։

Բոլորովին նոր հայացքով մերձենալով մարդու՝ քրիստոնեության կողմից ըստ էության մերժված, «մեղսամակարդ» հայտարարված մարմնի արժեքավորմանը, Նարեկա վանական քերթողը համարձակորեն փշրեց դարերով սրբագործված քարացած պատկերացումներն ու հոգևոր երգի ավանդական շաբլոնը՝ իր «փոքր» պոեզիայի քնարական մի քանի սքանչելի կերտվածքներում (ճիշտ է, այլաբանական բնույթի) հոգու իրավունքի հետ միասին փաստորեն հավաստելով նաև մարմնի իրավունքը՝ առայժմ շեշտը դնելով, սակայն, միայն մարդ-արարածի (անունով, ասենք, դա տիրամայրն էր) մարմնական բարեմասնությունների, մարդու ֆիզիկական գեղեցկությունների պատկերման վրա։ Այստեղ ևս, ինչպես այլուր, անտարակույս, յուրովի դրսևորվել է բանաստեղծի՝ մարդու արժեքավորման, նրա վեհացման հումանիստական մտահայեցողությունը։ Մինչդեռ «Ողբերգության մատյանում» արդեն, պատկերման գլխավոր կենտրոնը փոխադրվում է մարդու հոգեկան խրթնիմաստ, դժվար վերծանելի ներաշխարհի, այսպես կոչված «ներքին մարդու» վրա, թեև քերթողը չի մոռանում նաև մարդու ֆիզիկականը՝ բնափիլիսոփայական հետաքրքիր տեսանկյունով մերթ ընդ մերթ անդրադառնալով նաև մարդկային դոյի մարմնական արժանիքների գնահատությանը։ Ինքնին հասկանալի է, որ վերոհիշյալ հանգամանքը բանաստեղծից պահանջում էր ոչ միայն հոգեբանական քննախուզումների առանձնահատուկ սկզբունքներ, այլև իրականության գեղարվեստական յուրացման նոր եղանակներ, նոր արտահայտչամիջոցներ ու ձևեր։

Սույն հոդվածում մենք կանգ կառնենք Նարեկացու կողմից մարդկային էության ընկալման հետ առնչվող որոշ հարցերի վրա, որոնց պարզաբանումը, ինչպես կարծում ենք, կնպաստի ավելի ամբողջական ու խոր բացահայտելու Նարեկացու վերածննդական հումանիզմի մի քանի կարևոր յուրահատկությունները, բնութագրելու նրա փիլիսոփայական ու գեղագիտական ընկալումների էական սկզբունքները։

Ամենից առաջ հատուկ ուշադրության է արժանի այն պարագան, որ չընայած ինքնաձաղկում-ինքնանվաստացումին, որի բուն իմաստի նորովի մեկնաբանությունը մենք տվել ենք մեր «Մարդու ճակատագրի Նարեկացու ընկալումը» հոդվածում[1]*, Նարեկացին այնուամենայնիվ մարդուն ընկալում է որ-*

---

[1] *Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 3, էջ 16—26։*

պես աստծու արարչական գործի գերագույն արգասիք ու բնության ամենարովանդակալից ու կատարյալ մասնիկ, իբրև ինքնատիպ տեսակագործված «միկրոաշխարհ», անգամ՝ մի ավարտուն ու զմայլելի «միկրոտիեզերք»։ Քերթողը մարդուն արհեստականորեն չի տարանջատում, չի երկփեղկում, այլ նրան դիտում է իր ամբողջության մեջ՝ իբրև երկու կարևոր էությունների՝ մարմնական ու հոգեկան նախասկիզբների մի զարմանալի ներդաշնակ ու անբակտելի միասնություն, որոնցից էլ սկիզբ են առնում մարդու երկու կարգի ունակությունները, մեկը՝ կապված մարմնականի (ֆիզիկականի), մյուսը՝ հոգեկանի (բանականության, զգացմունքի) հետ։

Մարդկային էության նկատմամբ, որպես մարմնականի ու հոգեկանի միաձույլ ու համաչափ մի ամբողջության, Նարեկացու հայացքի բուն էությունը պարզելու տեսակետից բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես «Ողբերդության մատյանի» ԽԶ գլուխը։ Այստեղ ամենից առաջ ուշագրավ է այն ինքնատեսակ ներքին բավականությունը, մենք կասեինք, անգամ, հիացմունքի բավական թափանցիկ զգացումը, որով հեղինակը շարունակում և յուրովի զարգացնում է իր իսկ տաղերում արտահայտած գաղափարը՝ վերստին ընդգծելով մարդկային դոյի անթերի ֆիզիկական կատարելությունը, խոսում մարմնի անդամների՝ ֆունկցիոնալ առումով խիստ նպատակահարմար ստեղծված լինելու մասին, արծարծում մարդու բանականության ու նրա ստեղծագործելու կարողությունների փոխադարձ կապի հարցերը և այլն[2]։

«Ըստ ձեւոյ հրեշտակի» ստեղծված մարդու մարմնական կառուցվածքի նկարագրությունը բանաստեղծն սկսում է զույգ ոտքերից ու ձեռքերից.

> Ահա ի յոտս տանողականս
> Կրողաց երկուց միակցորդ խորհրդականաց,
> Ըստ ձեւոյ հրեշտակի կառուցար,
> Որ ի թռիչս թեւոց կրկնարարձ բազկաց վերատանողաց՝
> Ոտշխարհն հայրենական հայել...[3] (բան ԽԶ, բ)։

Այնուհետև Նարեկացին տալիս է մարդու «նյութական շինվածքի» տարատեսակ ու տարաբնույթ անդամների, անգամ ամենաաննշանների, շատ կարճառոտ, բայց չափազանց դիպուկ ու գեղեցիկ ընդհանուր բնութագիրը։ Ընդ որում, բանաստեղծն առանձին ուշադրություն է դարձնում ոչ միայն այդ անդամների քանակով ճշգրիտ, այլև առհասարակ խիստ նպատակահարմար, միանգամայն որոշակի չափով ու կշիռով, քերթողի խոսքով ասած՝ «իբր կանոնաւ իմիք սահմանեալ», «անսխալ եւ անայլայլելի» ստեղծված լինելու վրա։ Ըստ քերթողի, մարմնի անդամներից՝

> ...Ոմանք ստուարք են եւ զաւրաւորք,
> Եւ այլք փոքունք են եւ պիտանիք,
> Կէսք՝ կարծրակերտք եւ աղդողակունք,
> Ե՞ն եւ գողտրականք եւ պատուականագոյնք,
> Դարձեալ՝ կարեւորք եւ պատկառելիք։
> Իսկ թարգմանութիւնք սոցին տեսութեան ի քեզ են նկարեալ՝

---

2 Այստեղ, ի դեպ, մարդու մարմնի մասերի քանակի մասին Նարեկա վանականը կրկնում է միջին դարերում շատ տարածված հայացքը, որ եկել-հասել է մինչև Սայաթ-Նովա։ Ըստ այդ հայացքի, որ ամենայն հավանականությամբ վաղնջական դարերի հնություն ունի, մարդու մարմինը բաղկացած է հոդերով շաղկապված 360 մասերից ու 5 զգայարաններից, ընդամենը՝ 365, որ համապատասխանում է տարվա օրերի քանակին։

3 Նարեկացու պոեմի քաղվածքները վերցնում ենք հետևյալ հրատարակությունից՝ Գ ր ի գ ո ր Ն ա ր ե կ ա ց ի. Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի. Երևան, 1985 (այսուհետև՝ Մատեան ողբերգութեան)։

Իբր յարձանի անշնչականի, անձն իմ եղկելի,
Որպէս զի եւ տարր ժամանակաց
Եւ շարունակ հեռեւման աւուրցն առ պսակ ամին,
Իբր կանոնաւ իմիք սահմանեալ մասամբքդ՝
Անսխալ եւ անայլայլելի պահեսցի (բան ԽԶ, բ)[4]։

Այնքանով, որքանով մարդու մարմնի անդամներից ամեն մեկն ունի իր հատուկ դերն ու նշանակությունը» և նրանց բոլորի ամբողջությունը մի միաձույլ, իդեալապես ճարտարված համակարգ է կազմում, ապա նրանցից յուրաքանչյուրի, անգամ ամենաաննշանի պակասելու կամ խեղվելու դեպքում, քերթողի կարծիքով, տուժում է ոչ միայն մարմնական կառուցվածքի այս կամ այն հատվածը, այլև ինքը՝ ողջ կառուցվածքը, խախտվում է նրա՝ աստծու կամքով ի վերուստ սահմանված համաչափությունն ու անթերի ներդաշնակությունը։

Շատ ուշագրավ է, որ հայոց հոգևոր համախմբվածության գաղափարի մեծ նվիրյալ բանաստեղծը մարդու մարմնական կառույցի անքակտելի ամբողջականությունն ու ներդաշնակ կատարելությունը առանձնակի ուժով շեշտելու նպատակով այն համեմատում է ազգային եկեղեցու միասնության հետ, *որ անտարակույս, քերթողի համար* բացարձակ ու գերագույն արժեք էր: *Ավելորդ է ապացուցել, թե ժամանակին նման համեմատության մեջ բանաստեղծական պատկերը որքան պատկառազդու էր ներկայացնելու Նարեկացու խոհերի ընթացքն ու էությունը։ Առանց մարմնի տարարժեք ու տարաբնույթ օրգանների փոխադարձ կապի ու համալրվության, «առանց բնաւից զուգամասնութեանն», ինչպես խորհում է քերթողը, ողջ մարմինը կկորցնի իր գոյությունն ու կդառնա հույժ տկար ու դյուրակործան.*

Դարձեալ այլ աւրինակ հոգեւորական,
Որ զսիրոյն յաւդուած շաղկապէ ի մի առ եկեղեցի,
Քեւ խորհրդածի.
Իբր զի առանց բնաւից զուգամասնութեան
Կապակցել լծով հաւանականաւ զվեհն ընդ փոքուն,
Վնասեալ է հաստուածոյն անարատութիւն յանուն Քրիստոսի ժողովելոց,
Որպէս ի հատումն եւ ի նուազութիւն
Միոյ յանդամոցս անարգացս՝ պատուաստելոցս ի մարմնի,
Կրճատեալ իմն է յաւրինուած կազմութեան մարդոյդ քում սեննկի զգայականի,
Եւ շրշեալ է ընտանութիւն պատկերին յանկարգ փոփոխութիւն (բան ԽԶ, գ)։

Այսպիսին է, ահա, Նարեկացու կարծիքը մարդու «նյութական շինվածքի», նրա մարմնական կառուցվածքի յուրահատկությունների մասին։

---

4 «Նարեկի» ԽԶ գլխի Բ հատվածի վերաբերյալ տե՛ս Հ. Հ. Թամրազյանի «Անանիա Նարեկացի. Կյանքը և մատենագրությունը» շահեկան աշխատության (Երևան, 1986) 69—72 էջերը, ուր հեղինակը այս կապակցությամբ քննարկում է Գրիգոր Նարեկացու և նրա ուսուցչի բնագիտական ու բժշկական գիտելիքների աղբյուրների խնդիրը՝ կապված անտիկ գիտության ավանդների օգտագործման հետ։ Հետազոտողը «Մատյանի» այս հատվածը իրավացիորեն որակում է որպես մի «ներբող մարդկային բնությանը, մի ներբող, որին, սակայն, միացել է նաև բժշկական գիտելիքը, հայացքն ու տեսությունը» (նշվ. աշխ., էջ 71—72)։ Հիմնավոր է թվում հեղինակի այն եզրահանգումը, ըստ որի «արդեն այն փաստը, որ նրանց գիտելիքներն այս ասպարեզում չեն սահմանափակվում քրիստոնեական ժամանակաշրջանի նմանատիպ աշխատություններով՝ ինքնին խոսում է և վկայում է նրանց լայն մտահորիզոնի ու տեսադաշտի մասին։ Այն մտածել է տալիս նաև X դարում կամ նրանից առաջ անտիկ դարաշրջանի բժշկարանների հայերեն թարգմանությունների գոյության հնարավորության մասին։ Պարզ է մի բան՝ այն, որ այդպիսիք բնագրով կամ թարգմանաբար շրջանառության մեջ էին Նարեկա դպրոցում և ամենայն հավանականությամբ ընդգրկված էին նրա կրթական համակարգի մեջ» (նույն տեղում, էջ 72)։

Ինքնին հասկանալի է, որ մարդու ֆիզիկական արժանավորությունների դովերգը, նրա մարմնական կառուցվածքի իդեալական ներդաշնակության դրվատանքը բանաստեղծի համար ինքնանպատակ բան չի եղել և պիտի կարծել, որ նա ըստ երևույթին դրանով մեկ անգամ ևս ձգտել է հավաստել, հիմնավորել մարդու վեհացման, նրա աստվածացման իր հումանիստական գաղափարը, քանզի քերթողի համար ամեն ինչով անթերի կատարելություն էր միայն ինքը՝ «բարձրութիւն անբովանդակելի», «գոյութիւն անճառելի» աստվածը, որին ամեն ինչով պիտի ձգտեր հասնել ու նմանվել «ի պատկերի իւրում» ստեղծված մարդ-արարածը։ Միանգամայն պարզ է, որ Վերածնության դարաշրջանում, աշխարհիկ կյանքի և մտայնության հետզհետե ծավալման նոր պայմաններում, երբ իրականության ընկալմանը ու գեղարվեստական իմաստավորմանը այլևս չէին բավարարում հին, ավանդական մեթոդները, ավելի կոնկրետ աստվածաշնչի դոգման ու դոգմատիկ մտածողությունը, առավել կարևոր նշանակություն ու մեծ արժեք էր ձեռք բերում մարդկային բանականությունը, հանգամանք, որ, բնականաբար, չէր կարող իր արձագանքը չստանալ նաև գեղարվեստական գրականության մարզում։ Ահա թե ինչու մարդու մարմնական բարեմասնությունները, նրա «նյութական շինվածքի» նպատակահարմարությունն ու կատարելությունը ջատագովելու հետ մեկտեղ, թերևս դրանից էլ ավելի, Նարեկացու համար կարևորություն է ստանում մարդու մտավոր զորության, նրա հոգեկան ուժի խնկարկումը (հիշենք նրա մի ասույթը. «Բանականութեանն յարգանաւք կրկին ճոխացար...»), որով էլ, քերթողի կարծիքով, հենց առաջին հերթին մարդկային դոյը առանձնանում է աստծու մյուս բոլոր արարածներից։

Այս առումով չափազանց ուշագրավ է, որ տակավին իր պոեմի առաջին գլուխներից մեկում, որպես աստծու կողմից մարդուն պարգևած մեծագույն առանձնաշնորհում, գործելու ազատ կամքի կամ այլ կերպ՝ անձնիշխանության («իշխանականին գոյիւ պճնեցեր»)[5] հետ միասին հումանիստ բանաստեղծը շեշտում է արարածներից միայն մարդուն բնորոշ բարձրագույն հատկությունը՝ բանականությունը, նրա «բանիւ» «զարդարվելը», մտքով «ճոխանալը», «հանճարով» հաստատվելը.

> Որ արարեր զիս ի քո պատկեր պանծալի՝
> Ի ձեռն վեհիդ տպաւորութեան զտկարս աւժանդակելով,
> Զաւրդարեցեր բանիւ, փայլեցուցեր իշմամբ,
> Մտաւ ճոխացուցեր, իմաստիւ աճեցուցեր,
> Հանճարով հաստատեցեր, ի շնչականացն որոշեցեր,
> Հոգւով իմանալեաւ իսառնեցեր,
> Իշխանականին գոյիւ պճնեցեր,
> Ինար հայրարար, սնուցեր դայլկապէս, տածեր ստացողապէս... (բան Ե, բ).

Մարդու բուն մարդկային, հոգեկան բարեմասնություններին, նրա մտավոր վեհությունների բնութագրությանը ավելի լայն հայեցակետով բանաստեղծն անդրադարձել է պոեմի հիշյալ ԽԶ գլխում, ուր մարդու մարմնական սոտքինությունններին զուգավար, կարելի է ասել, է՛լ ավելի մեծ պաթոսով

---

[5] Պիտի նկատել, որ այստեղ Նարեկացու վրա ակա է Եղնիկ Կողբացու ուղղակի ազդեցությունը, սրի երկում կարդում ենք. «Աստուծոյ մարդկան այսպիսի ինչ լինել՝ չթուի պատշաճ ասել, այլ ունել անձնիշխանութիւն և ազատութիւն առաջնոյ մարդոյն եղելոյ յԱստուածոյ, և ի նմանէն զնոյն իւրոց պայազատացն ժառանգել։ Եւ արդ առեալ զանձնիշխանութիւնն, ո՞ւմ կամի՝ ծառայանայ. որ մեծ շնորհն պարգևեալ է նմա յԱստուածոյ...»։ Եվ ապա. «Այլ Աստուած այնպէս պատուել զմարդն կամեցաւ, զի առ լաւութեանցն խելամուտ լինելոյ՝ զանձնիշխանութիւնն պարգևեաց նմա, որով կարող իցէ առնել զինչ և կամեսցի, և զանձնիշխանութիւնն նորա ի լաւն խրատէ դարձուցանել» (Եղնկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց. Թիֆլիզ. 1914, էջ 29, 30)։

ու կրքով նա դրվատում է մարդկային բանականությունը և դրա շնորհիվ միայն մարդուն տրված առանձնահատուկ ինտելեկտուալ կարողությունները՝ մտածելու և խոսքի միջոցով մտքերն «անարգել լեզուով» արտահայտելու ունակությունը, մարդու ձեռքերի «յարմարոստեան» (ճարպիկ, աջողաձեռն) ու գործուն մատերի՝ ամեն ինչ ճարտարելու արվեստը, որին, բանականության հետ միասին, բացառիկ նշանակություն է տալիս բանաստեղծը, քանզի այդ արվեստի շնորհիվ է, որ մարդը կարողանում է ստեղծել բազմաթիվ բարիքներ ու իր առօրյա կյանքի պետքերը հոգալ («զգործնականացն տնաւրինել զտնտեսութիւն») և այլն։ Միով բանիվ, քերթողի ընկալումով աստծուց իբրև գերագույն պարգև ստացած բանականության և ստեղծագործել-արարելու ձիրքի շնորհիվ է, որ արարածներից սոսկ միայն մարդն է դարձել աստծուն գործակից, նրան համատոհմ («իբր կցորդ համացեղութեամբ ամենաբաշխ աջոյն աստուծոյ...»), անգամ, ինչպես ասում է բանաստեղծը, արժանի աստված կոչվելու, որ պետք է հասկանալ, անշուշտ, ստեղծող-ստեղծագործող, արարող իմաստներով։

Փառաբանությունը քերթողն սկսում է մարդու գլխից.

Իբր զճրագ բազմաբերանեան
Ի յաշտանակի մարմնիդ հաստատեցաւ գլխոյդ բոլորութիւն,
Զի եւ այսու ի յաւրինակէն շնորհէ մի՛ աւտարասցիս
Զաստուած տեսանել եւ զմնացականացն իմաստասիրել։
Բանականութեանն յարգանաւք կրկին նոխացար,
Զի զյաղթանակ բարեմասնութեանն, որ առ քեզ եղեն,
Անարգել լեզուով խաւսեսցիս...
Զեռինդ հաստմամբ յարմարոստեան մատանցդ շառաւիղաւք՝
Զգործնականացն տնաւրինել զտնտեսութիւն,
Իբր կցորդ ճամացեղութեամբ ամենաբաշխ աջոյն աստուծոյ՝ աստուած կոչեցար
(բան ԽԶ, ը)։

Այստեղ հարկ կա «Ողբերգության մատյանի» մեկ ուրիշ գլխից վերհիշելու մի հատված ևս, ուր այլ կողմից է պարզաբանվում Նարեկացու միտքը.

Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանաւր,
Յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց՝
Աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին
Եւ ընդ հաստողիդ միանալ՝ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ
Եւ ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ,
Զոր կատարումն երջանիկ խոստման... (բան ԾԲ, գ)։

Ահա թե ինչ խիստ ուշագրավ հայեցակետով է ընկալել մեծ մտածողն ու հանճարեղ բանաստեղծը բանականության շնորհիվ մարդ-արարածի վեհացման, նրա աստվածացման գաղափարը, որով և մեծապես պայմանավորված է նրա հոգենվաղ «Ողբերգության մատյանի» հումանիստական վիթխարի լիցքն ու վերածնական միտվածքը։

Վերը քննարկված պրոբլեմների կապակցությամբ անհետաքրքիր չի թվում մի հարց. մարդու մտավոր ու ֆիզիկական առաքինությունների մասին Նարեկացու հայացքների ձևավորման վրա արդյոք որևէ ազդեցություն չե՞ն ունեցել անտիկ փիլիսոփայական և բնափիլիսոփայական պատկերացումները, որոնց, պիտի կարծել, հազիվ թե անհաղորդ լիներ Նարեկա համբավավոր վանքի դպրոցում, հմուտ գիտնական ուսուցչի ձեռքի տակ կրթություն ստացած, հետագայում ինքնազարգացմամբ ծով գիտելիքների հասած Գրիգոր Նարեկացին։ Հավաստի տվյալների բացակայության պատճառով, իհարկե, դժվար է առաջադիր հարցին որոշակի պատասխան տալ, բայց որոշ փաստեր

կարծես թե թույլ են տալիս իրավազոր համարելու նման հարցադրումը։

Մեզ դրազեցնող խնդրի կապակցությամբ, մասնավորապես, հետաքրքրական են թվում Արիստոտելի «Կենդանիների մասերի մասին» աշխատության մեջ արտահայտված որոշ մտքերը, որ վերաբերում են մարդու մարմնի կառուցվածքի յուրահատկություններին, նրա մտավոր ու ֆիզիկական ունակությունների փոխադարձ կապին ու պայմանավորվածությանը, մարդու բուն մարդկային էության առավել կարևոր հատկանիշների բնութագրությանը և այլն։ Զարմանալի ուշագրավ է, օրինակ, մեծ փիլիսոփայի հետևյալ դատողությունը. «Մարդը առջևի երկու ոտքերի ու թաթերի փոխարեն ձեռքեր և, այսպես կոչված դաստակներ ունի, որովհետև նա կենդանիներից միակն է, որ ուրիշ է կանգնում։ Դա հետևանք է այն բանի, որ մարդու բնույթն ու էությունը աստվածային են. չէ՞ որ աստվածային էակի գործը բանականորեն մտածելն է...»[6] (ընդգծումը մերն է—Վ. Ն.)։ Շարունակենք հետևել Արիստոտելի մտքերին. «Մարդը բնականից ուղղաձիգ լինելով; առջևի ոտքերի կարիք չունի և դրանց փոխարեն բնությունը նրան ձեռքեր ու ձեռքի դաստակներ է տվել։ Թեև Անաքսագորն ասում է, թե մարդը կենդանիներից ամենաբանականն է շնորհիվ իր ձեռքերի, բայց տրամաբանական է ենթադրել, որ բանական լինելու հետևանքով է, որ նա ձեռքեր ունի։ Չէ՞ որ ձեռքերը գործիք են, իսկ բնությունը, ինչպես և բանական մարդը, ամեն մի իր տալիս է նրան, ով կարող է այն օգտագործել։ Ավելի շուտ պատշաճ է, որ ֆլեյտան տրվի նրան, ով իսկապես ֆլեյտահար է, և ոչ թե ֆլեյտա ունեցողին այդ գործիքը նվագելու արվեստի դասեր տալ...»։ Վերստին անդրադառնալով մարդու բանականության և ստեղծագործող ձեռքերի փոխհարաբերության խնդրին, մեծ փիլիսոփան շարունակում է. «...եթե այդպես «ավելի լավ է», իսկ բնությունը հնարավորից միշտ ավելի լավն է ստեղծում, ապա մարդը ամենագիտակից կենդանին է ոչ թե այն պատճառով, որ նա ձեռքեր ունի, այլ նա ձեռքեր ունի, որովհետև ամենաբանական էակն է, քանզի ամենաբանական էակը լավ կօգտագործի շատ գործիքներ, իսկ ձեռքը, անկասկած, ոչ թե մի գործիք է, այլ՝ շատ. այն ասես գործիքների գործիք է։ Հենց նրան, ով կարող է ավելի մեծ թվով արվեստներ ընկալել, բնությունը տվել է ձեռքեր, որոնք գործիքների մեջ առավել պետքականներն են»[7]։

Նարեկացու ուշադրությունը կարող էին գրավել նաև Արիստոտելի ինքնատիպ դատողությունները մարդու մարմնական կառուցվածքի ներդաշնակ կատարելության, նրա անդամների բացառիկ նպատակահարմար ստեղծված լինելու մասին և այլն, որոնք, իրոք, շփման հետաքրքիր եզրեր ունեն և լավագույնս ներդաշնակում էին մարդու մտավոր ու ֆիզիկական բարեմասնությունների, նրանց փոխադարձ կապի, մարդու բանականության ու ստեղծագործական ունակությունների առնչակցությունների մասին Նարեկացու վերը քննարկված ընկալումներին և առհասարակ մարդ-արարածի մասին նրա պաշտպանած հումանիստական իդեալի սկզբունքներին։

Հարկ կա նկատելու, որ եթե անգամ Նարեկա վանական քերթողը անմիջականորեն ծանոթ չի եղել Արիստոտելի նշված աշխատությանը (որը մեզ քիչ հավանական է թվում), ապա նա կարող էր դրանց մասին տեղեկանալ այլ աղբյուրներից, ինչպես, ասենք, անտիկ բժշկագիտության դասական դեմքերից մեկի՝ Կլավդիոս Գալենի (Կլավդիոս Գալեն, մ. թ. II դար) գրվածքներից և կամ թե վաղ բյուզանդական գիտության նշանավոր ներկայացուցիչ Գրիգոր Նյուսացու «Ցաղագս կազմութեան մարդոյ» աշխատությունից, գուցե և Նեմեսիոս Եմեսացու «Ցաղագս բնութեան մարդոյ» երկից և այլն։ Նման աշխատությունները, ինչպես հայտնի է, անտիկ և վաղ բյուզանդական գիտության այլ կարկառուն դեմքերի գործերի հետ միասին, բավական տա-

---

[6] Аристотель. О частях животных. Перевод с греческого. вступительная статья и примечания В. П. Карпова. М., 1937. с. 149.

[7] Նույն տեղում, էջ 151։

բածված են եղել միջնադարյան Հայաստանում, և նրանցից օգտվել են շատերը, այդ թվում նաև հայ միջնադարի խոշորագույն բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացին։ Այստեղ, որպես օրինակ, Գալենոսի «Մարդկային մարմնի մասերի նշանակության մասին» աշխատությունից մեջ բերենք հետևյալ հատվածը. «Ինչպես որ մարդը բոլոր կենդանի էակներից ամենագիտակիցն է, այդպես էլ նրա ձեռքերը իմաստուն էակին համապատասխան գործիքներ են հանդիսանում. չէ՞ որ մարդը ամենաիմաստունն է կենդանի էակներից ոչ թե այն պատճառով, որ նա ձեռքեր ունի, ինչպես ասում է Անաքսագորը, այլ նա ձեռքեր ունի, որովհետև ամենաիմաստունն է, ինչպես դա հայտարարում է Արիստոտելը, որը դատում է շատ բանականորեն։ Իրոք, ոչ թե իր ձեռքերի, այլ իր բանականության շնորհիվ է, որ մարդը սովորել է բոլոր արվեստները։ Ձեռքերը մարդու գործիքներն են, ինչպես քնարը՝ քնարահարի, ունելին՝ դարբնի համար։ Չէ՞ որ քնարը չի ստեղծել երաժշտին և ոչ էլ ունելին՝ դարբնին, բայց նրանցից ամեն մեկը մասնագետ է՝ համապատասխան իր օժտվածության...»[8]։

Միանգամայն հնարավոր է, որ անտիկ բնափիլիսոփայական մտքի նման եզրահանգումները, իսկապես, կարող էին խթանել Նարեկացու մարգարգության վերը բնութագրված սկզբունքները կամ ինչ-որ չափով ազդեցություն ունենալ այդ սկզբունքների ձևավորման վրա[9]։

Նարեկացու մոնումենտալ երկում տեղ են գտել մարդկային իմացության ամենատարբեր բնագավառներին վերաբերող, կարելի է ասել հանրագիտական բնույթի տվյալներ, որոնց քննական վերլուծությունը, անշուշտ, նոր շերտեր կբացի հայ ստեղծագործական հանճարի այդ զարմանահրաշ կերտվածքում, կնպաստի առավել ամբողջացնելու նրա համակողմանի բնութագիրը։

Բազմաթիվ հետաքրքրական խնդիրներից այստեղ, որպես օրինակ, «Ողբերգության մատյանից» հիշենք նրա մի փոքր հատվածը, ուր բանաստեղծը մարդու հոգեկան ցավերը ամոքելու հարցն արծարծելու առիթով փաստորեն տալիս է իր ժամանակի բժշկական արվեստի հիմնական եղանակների, բուժման գլխավոր միջոցների դասակարգումը՝ «հատում» (արյունառություն), խարանում, «սրագործություն» (վիրահատություն) և «դեղատվություն» (թերապևտիկ միջոց).

Որ ո՛չ կարատանաս սպեղանեաց,
Առ պատրաստութիւն պատանաց հոգեկան վիրաց,
Ո՛չ ժամանակի, ո՛չ միջնորդի,
Ո՛չ աւուրց երկարաձգութեան,
Ո՛չ փոփոխս մատուցանելոյ,
Ո՛չ հատման, ո՛չ խարանման, ո՛չ սրագործութեան՝
Ըստ երկրաւորս դեղատուութեան,
Առ որս միշտ է վրիպութիւն
Եւ ամենասխալ տարակուսութիւն (բան ԽԳ, բ)[10]։

---

8 Տե՛ս Клавдий Гален. О назначении частей человеческого тела. Перевод с древнегреческого проф. С. П. Кондратьева. М., 1971, с. 57.

9 Առհասարակ կարծում ենք շատ շահեկան կլինի հանգամանորեն ուսումնասիրել Նարեկացու բնափիլիսոփայական հայացքների ու անտիկ գիտության աղբյուրների հարցը՝ հատուկ ուշադրություն դարձնելով, մասնավորապես, «Նարեկի» բժշկագիտական-բուժական բովանդակությամբ հատվածների վրա, որոնց ակունքը, թեև, հավանաբար ազգային ժողովրդական բժշկությունն է, բայց միաժամանակ հետաքրքրական է պարզել դրանց առնչությունները անտիկ գիտական պատկերացումների հետ։

10 Այս հատվածի առիթով տե՛ս Նարեկ աղօթից, համառօտ և զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ միանգամ ե այժմ երկրորդ անգամ յաւելուածով, աշխատասիրութեամբ նոքին տեառն հ. Գաբրիէլ Աւետիքեան աթոռական վարդապետի. Վենետիկ, 1827, էջ 216—218, ծանՆ՝ 3 և 4 (այսուհետև՝ Ավետիքյան)։

Վերադառնալով մեր քննարկած հիմնական խնդրին՝ մարդու էության ըմբռնմանը, հարկ ենք համարում շեշտել այն մեծ նշանակությունը, որ Նարեկացին տալիս է մարդու մտավոր խարողությանը, բանական էակի կառավարող զորությանը, առանց որի, ինչպես կարծում է բանաստեղծը, թե՛ կյանքում և թե՛ բնության մեջ ոչինչ չի կարող կանոնավոր ընթացք ունենալ և ոչ մի գործ բարեհաջող ավարտի չի կարող հասնել։ Այս առումով հույժ նշանակալից են քերթողի մտքերը.

Չի ո՛չ երբէք հարթ ընթանայ երիվար առանց սանձակալի,
Եւ ո՛չ նաւ համբառնայ հանդէպ առանց ուղղչի,
Եւ ո՛չ արօր կշիռ ինչ գործէ առանց մաճակալի,
Եւ ո՛չ երկուորեակք լծոյն ի ճահ ճեմեսցին առանց եզողի,
Ո՛չ ամպ վերաշուէ առանց հողմոյ,
Ո՛չ աստեղք ցնդին եւ կամ գումարին առանց ժամանակի,
Ո՛չ արեգակն փոփոխերեալ ուր շրջանակի առանց տարրական ագոյ,
Եւ ո՛չ ես, նորոգ հանդերձ՝ առանց բարեգործիդ հրամանաց ակնարկութեան[11]
(բան ԾԴ, բ)։

Ինքնին հասկանալի է, որ այս ամենի մեջ վանական բանաստեղծը, բնականաբար, պիտի տեսներ աստվածային գերագույն կամքի արտահայտությունը, որ միանգամայն բնական է, բնորոշ ու հասկանալի իր ժամանակի ընդհանուր մտայնության առումով։

Հարկ կա նշելու նաև հետևյալը։ Որքան էլ բարձր գնահատենք Նարեկացու մարդերգությունը ու այն, իրավամբ, դիտենք որպես իր ժամանակի համար վերածննդական հումանիզմի բարձր արտահայտություն, այնուամենայնիվ պիտի ասենք, որ բանաստեղծի պատկերածը տակավին ապաշխարող մարդն է՝ իր մարդկային էության որոշակի սահմանափակություններով։ Եթե կարելի է այսպես ասել, «լիարժեք մարդը»՝ իր ողջ էությամբ, բուն մարդկային հույզերի ու զգացումների լիագին ու հարուստ կենսաշխարհով, իր սրտի նվիրական գաղտնիքներով ու երազանքներով, պոեզիայում հանդես պիտի գար Նարեկացուց մի երկու դար հետո միայն՝ հայ միջնադարյան աշխարհիկ տաղերգության մեջ, որի ձևավորման ու զարգացման գործում, իրոք, անհնար է անտեսել Գրիգոր Նարեկացու ստեղծագործության դերը։

2

Գրիգոր Նարեկացու քերթողաշունչ «Մատյանն» ամբողջությամբ վերցրած, ըստ էության, մի սքանչելի համանվագ ու խիստ ինքնատիպ մարդերգություն է, ուր բանաստեղծն, ասես, ամենուրեք դաշնություն է որոնում իր կրոնական համոզմունքների և մարդու կատարելագործման, նրա (ինչպես և առհասարակ ողջ մարդկային ցեղի) փրկության հումանիստական իդեալի միջև։ Որոշ իմաստով անգամ կարելի է ասել, որ Նարեկա վանականը այդ բարձր իդեալի հայեցակետով «խմբագրում» կամ «սրբագրում է» կրոնական դոգմայի առանձին հայտնի դրույթները, և այնպես է թվում, որ բոլոր հիմքերը կան խոսելու Նարեկացու մոտ կրոնական աշխարհայեցողության հումանիզացիայի մասին, հանգամանք, որ, ըստ երևույթին, պետք է դիտել իբրև հեղինակի վերածննդյան գաղափարաբանության մի բնորոշ յուրահատկությունը։

---

[11] «Ողբերգության մատյանից» մեջ բերված հատվածի ընդունելի վերծանությունը տվել է Նարեկացիագետ Արշ. Ղազինյանը. տե՛ս Մատեան ողբերգութեան, էջ 1062, ծան. № 2։ Վերը շոշափված հարցի առթիվ, կարծում ենք, ավելորդ չի լինի վերհիշել նաև «Հարությանը» տաղը, ուր ես, ինչպես հայտնի է, յուրովի դրսևորվել է մարդու («ճորտի»), որպես բանական էակի, փառավորող զորությունը։

Դաշնության որոնման վերոհիշյալ մտայնությունն իր ինքնօրինակ դըրսևորումն է ստացել «Նարեկի» գաղափարական ճոխ բովանդակության տարբեր մարզերում, այդ թվում, մասնավորապես, մարդ-արարածի հոգեբանության, նրա հուզական աշխարհի բանաստեղծական վերծանման բնագավառում։ Ըստ ամենայնի թափանցելով մարդկային հոգու նվիրական ու ամենախոր գաղտնածալքերի մեջ, Նարեկացին տվել է բանաստեղծական արվեստի այնպիսի փայլուն հայտնություններ, որոնք, կարելի է ասել, այդպես էլ անհասանելի մնացին՝ ընդհուպ մինչև նոր ժամանակները։ Գրիգոր Նարեկացին, իրավ, մի զարմանալի ինքնատիպ հոգետես ու հոգեխույզ բանաստեղծ է՝ այս հասկացությունների ամենալայն ըմբռնումով։

Նարեկացու մարդերգությունը բնութագրվում է հոգեբանական վերլուծումների բացառիկ նրբությամբ ու բազմերանգությամբ, վիթխարի հուզական լիցքով ու լարվածությամբ, հատկանիշներ, որոնց շնորհիվ «Մատեան ողբերգութեան» պոեմը դարձել է միջին դարերի հայ անձնական քնարերգության ամենաբարձր գագաթը, որի դիպուկ բնութագրությունը տվել է Նարեկացու քերթողական ժառանգության փայլուն մեկնաբանը՝ Հովհաննես Թումանյանը։ «Այո, հիրավի,— գրել է նա,— **հայ հանճարը կարողացել է խոսել մարդկային սրտի ամենանվիրական ու քնքույշ զգացմունքների հետ և կարողացել է հասնել մինչև Գրիգոր Նարեկացին»**[12] *(ընդգծումը մերն է—Վ. Ն.)։*

Մարդկային հույզի ու զգացմունքի արտահայտման անաղարտ անմիջականություն ու առինքնող անկեղծություն, առավելագույն խորություն ու անզուգական ճշմարտացիություն,— ահա Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի քնարական արվեստի գլխավոր արժանիքները, որոնք միաժամանակ առհասարակ ամեն մի բարձր պոեզիայի բնորոշ յուրահատկություններն են հանդիսանում։ Նկատենք, որ Նարեկացու քերթողական ժառանգության գլուխգործոցի, այդ «աստվածախոս մատյանի» պոետիկայի նշված առանձնահատկությունները տակավին մեր դարասկզբին նշմարել ու ընդգըծել է ֆրանսիացի գրող և արվեստաբան Գաբրիել Մուրեն, որի իրավացի դիտումով «...ոչինչ այնքան արտասովոր, այնքան խռովահույզ և միաժամանակ այնքան համակող չէ, որքան նրա (Նարեկացու) տագնապալի ճիչերը, հույսի տվայտանքները, զղջման մորմոքները... սոսկումները, պոռթկումները, փայլատակումները, մոլեգնության այն վիճակները, որոնց միջև հոգով ու մարմնով տարուբերվում է ու տառապում և որոնցով հափշտակվում է հեքվանականը։ Նրա պոեզիան, ասես, բռնկված է տենդով, **բայց միշտ մնում է մարդկային՝ իր մեջ արտահայտված զգացմունքների ճշմարտացիությամբ, հզորությամբ ու համարձակ ռեալիզմով»**[13] *(ընդգծումը մերն է—Վ. Ն.)։*

«Մատեան ողբերգութեան» պոեմի տարբեր հատվածներում քերթողը հատկապես հաճախ է անդրադառնում, օրինակ, «կամք ամենաբարի», «մեծութիւն ահեղ» աստծու և նրա «ապաւինութիւն նորոգ», «սիրալի մարդասիրութիւն» միածին որդու առջև, «յուսակտուր ագով», «ցամաքած», «դառնաշունչ հողմով» «շրջանակված» միջնադարյան հավատացյալ մարդու մեղքերի անկեղծ խոստովանություններին ու աղերսախառն մեղանչումներին՝ առատորեն հեղեղելով դրանք հոգեբանական զարմանալի նուրբ դիտարկումներով, զգայացունց խոսուն պատկերներով։ Ահա մի բնորոշ օրինակ.

Զպարտութիւնս խոստովանիմ եւ զմեղանս հրապարակեմ,
Կշտամբանաց քարամբք կոծիմ եւ հառաչանաւք սրտիս տապանամ,
Ի խէթ խղճիս խոցոտիմ եւ բոցով շնչոյս ճենճերիմ,
Աղի ցաւով արտասուացս այրիմ եւ երիկամանցս աղմամբ կիզանիմ,

---

12 *Հովհաննես Թումանյան. Երկերի ժողովածու. հ. IV, Երևան, 1969, էջ 241։*

13 Poèmes arméniens anciens et modernes. Traduits par Archag Tchobanian et précédés d'une etude de Gabriel Mourey sur la Poesie et l'Art Armeniens, Paris, 1902, p. 24.

Յուսակտուր աղով ցամաքիմ եւ դառնաշունչ հողմով շիջանիմ,
Թախանձանաց բանիւս եւրեիմ եւ կողկողագին հեծութեամբ գողամ,
Տաժանելի կրիւք տուայտիմ եւ տագնապաւ հոգւոյս տատանիմ,
Ի կոծ մորկաց ծփիմ եւ ի բախման ալեաց սասանիմ,
Ի լրութենէ համբաւոյն սարսեմ եւ յիշատակաւ ահին կործանիմ,
Կերպարանաւք ատենին հալիմ եւ սպառնալեաւք մեծին մեռանիմ... (բան ԿԶ, է)։

Հուզական նույնպիսի անկեղծ շեշտերով ու կրքի ինքնատիպ շիկացումով է հագեցված ահավոր վշտերի ծանրությունից ճնշված, «տարակուսանաց խավարի» մեջ ցավագնորեն խարխափող, միմյանց անընդհատ հաջորդող ու մեկը մյուսից դժխեմ վիճակներից դուրս գալու համառորեն ելք որոնող մարդու՝ խորապես մարդկային ու ծանր ապրումների ճշմարտապատում, Գարրիել Մուրեի խոսքով ասած՝ «համարձակ ռեալիզմով» տրված նկարագիրը.

Եւ արդ, զի՞րդ առից մխիթարութիւն այսքանեաց վշտաց,
Եւ կամ ընդ ո՞րքանեաց տարակուսանաց խաւարի
Լուսաւորութիւն յուսոյ կենաց խառնեցից,
Եւ կամ ո՞ւր արդեւք զգարշապարս ոտին կառուցից,
Եւ կամ յո՞ր վստահութիւն զայս իմ յառեցից,
Եւ զի՞նչ անդորրութիւն ծփանացս նկատեցից,
Եւ կամ յո՞ր ըղձական դիւրութիւն ձեռն համբարձից...
Եթէ յանգգնեցայց փախչել յունողէն[14] (բան ԿԸ, գ)։

Նույն առինքնող հուզականությամբ բանաստեղծը շարունակում է ծավալել իր խոհերը՝ ավելի ու ավելի ընդգծելով մարդու վիճակի խոր դրամատիզմը իրական կյանքից վերցրած բազմաթիվ ինքնատիպ, առարկայական, կենդանի պատկերներով.

Եթէ ի ակարսն խիզախեցից, վատնիմ ի պիծակա՜ցն,
Եւ զի՞ պիտոյ են ինձ առիւծունք.
Եթէ յարջոցն պատառողաց ապրեցայց,
Մժի՛ղքն՝ արեան ծարաւի՛քն, ինձ պատահեսցեն.
Եթէ յանհոգս ուրեք նստիցիմ,
Մժղո՛ւկքն անարգագոյնք, իբր ցնցուղս հրոյ եռացման, զինեւ մաղեսցին.
Եթէ յեղջերէ միեղջերւոյ փախուցում զերծեալ,
Նկո՛ւն ճիրանք աղկաղկաց մնոցն մորմոքողաց զիս կեղեքեսցեն.
Եթէ ի սեննակս շտեմարանաց խորշից զաղեալ ամփոփիցիմ,
Տաղտկատեսակ գարշութիւն գորտո՛ցն զիս ղազրացուսցեն.
Եթէ ի վայրս ինչ անդաստանաց կացեալ զետեղեցայց,
Շարք շանաճանճո՛ցն տարմից զինեւ պատեսցեն.
Թողում ասել զխառնիճն եւ զջորեակն՝ զգալրն գալրաւոր,
Ընդ թունաւորն թրթուր եւ ընդ անկենդանական երեւիլն,
Հանդերձ ջրակարծ կարկտիւն եւ ապականագործ եղեմամբն,
Որ առ աչաց տեսիլ ապազնեք եւ նուաստագոյնք... (բան ԿԸ, ե)։

Հապա հոգեբանորեն որքան ճշմարտացի է հնչում կյանքում մշտապես բարձրին ու իդեալականին ձգտող, բայց Քրիստոսի պատվիրանները չպահելու պատճառով, իր իսկ բանաստեղծի խոստովանությամբ, ոչնչի չհասած, անգամ եղածն էլ ամբողջովին կորցրած ու այժմ ձեռնունայն մնացած մարդու հույսերի փլուզումը, նրա անկեղծ զղջումի ու հոգեկան ծանր տվայտանքների իրապատում նկարագրությունը։

---

14 Այս մասին տե՛ս Ավետիքյան, էջ 348, ծան. № 11։

Ոչ յառեցի զակն ոգւոյս ի գլուխն իմ կենաց Քրիստոս,
Որով ընդ ուղիղն հետեւեցայց,
Քանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկլայ սաստկապէս,
Յանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի,
Ի մեծագոյնն ամբառնալ աստուստ գլորեցայ,
Յերկնային ուղւոյն՝ անգնդոց մատնեցայ,
Ի զգուշանալն առաւել յաւէտ վնասեցայ,
Յանարատն պահիլ՝ մանր խորտակեցայ,
Կարծելով ընդ ահեակն մրցիլ՝ յաչն գթեցի,
Ի զերկրորդն խուզել զնախնին կորուսի,
Ի խնդիր սակաւուն՝ ի կարեւորացն զրկեցայ,
Ի յուխտին պահել՝ դաշինն դրժեցի,
Առ սովորութեանն կտրիլ՝ կորուսիչս գտի,
Ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ,
Զոր ես ինքն ինձէն ստեղծեալ՝
Զարաշար դատախազ անձին կարգեցի (բան ԾԵ, ղ)։

Եթե մի պահ վերանանք բանաստեղծի համար գերագույն կատարելության խորհրդանիշ հանդիսացող «գոյութիւն անճառելի», «առաքելութիւն անհասանելի», աստծու համեմատությամբ մարդկային անձի անչափելի արատները, իր՝ ամեն կողմից խոցելի անկատարությունը խտացած գույներով ընդգծելու հանգամանքից (որի, ո՞չ երևութական, այլ իրական իմաստի մեկնաբանությունը մենք տվել ենք վերը նշված մեր հոդվածում) և պոեմի ողջ հյուսվածքի հիման վրա փորձենք կերպարանել արարչի կողմից «ի պատկերի իւրում» ստեղծված մարդկային էությունը (որի որոշ, հույժ կարևոր կողմերին անդրադարձանք վերը), ապա կստանանք, իրոք, շատ հետաքրքրական պատկեր։ Նարեկացու ընկալումով մարդը օբյեկտիվորեն, ըստ էության, բարձր է ու վեհ, անգամ հզոր է ու անկրկնելի հենց իր հոգեկան բովանդակ աշխարհի բազմերանգ հարստությամբ, զգացմունքների խորությամբ ու «փխրունության» հասնող նրբությամբ և այդ, իրոք, խորապես մարդկային հատկանիշների շնորհիվ է, որ մարդը, ամենակատարյալը աստծու արարածների մեջ, արժանի է հիացմունքի ու երկյուղած պաշտամունքի։ Թվում է, թե հենց այստեղ պիտի որոնել «Ողբերգության մատյանի» հումանիստական բովանդակության գլխավոր մեխը։ Հազիվ թե սխալվենք, եթե ասենք, որ վերը նշված հատկանիշների գեղարվեստական բացահայտումով «ներքին մարդու» պատկերումով Նարեկացու մոնումենտալ քերթվածը բանաստեղծական արվեստի այնպիսի բարձրության է հասել, որի նմանն, իրոք, այնքան էլ հաճախ չի կարելի հանդիպել միջին դարերի ողջ համաշխարհային պոեզիայում։

Ահա, օրինակ, հոգեբանական վերլուծումների ինչպիսի՞ նրբությամբ, երևակայության որպիսի՞ ուժով ու բանաստեղծական նուրբ զգացողությամբ է կերտել Նարեկացին մարդկային էության ամենաբարդ դրսևորումներից մեկի՝ երկվության պատկերը։ Մարդը ըստ բանաստեղծի,

Ի հանգստեան իւրում՝ վաստակեալ,
Ի խրախութեան՝ ինքեան տրտմեցեալ,
Դիմաւք՝ ժպտեալ, եւ մտաւք՝ խոցեալ,
Կերպ՝ ի ծաղր, եւ աչք՝ ի յոզբումն,
Երեսք զսփոփանս ձեւացուցանէ,
Ի, արտասուքն զդառնութիւն սրտին ճշմարտէ (բան Ղ, բ)։

Այնուհետև քերթողն իր բանաստեղծական խոհերի բազմաշերտ կծիկը ծավալում է հակադրությունների միջոցով՝ երանգային զարմանալի բազմա-

կերպությամբ (որ Նարեկացու պատկերային բարդ համակարգի մի կարևոր ուրահատկությունն է) հատկանշվող ու կառուցիկ պատկեր-համեմատություններով բացահայտելով մարդու ներհակ հոգեվիճակների բուն էությունը, նրան պաշարող իրարամերժ խոհերն ու զգացումները, որոնք որքան էլ սրտասուզոր են թվում միևնույն անձի մեջ, նույնքան էլ խորապես մարդկային են ու իրական։ Աստիճանաբար նոր թափ հաղորդելով իր խոսքերի հոլովույթին, բանաստեղծը շարունակում է.

Ըմպանակք երկու յերկոսին ձեռին,
Մինն՝ արեամբ, եւ միւսն՝ կաթամբ,
Երկու բուրանոյք կայծակնաւորք,
Մինն՝ խնկով, եւ միւսն՝ ճենճերիւ,
Սկաւառակք կրկին կրաւորականք համոց,
Մինն՝ քաղցու, եւ միւսն՝ դառնութեամբ,
Բաժակք զոյգ առ երկուս բերմունս,
Մինն՝ արտասուք, եւ միւսն՝ ծծումբ,
Տաշտք կրեցեալք ի ծայրս մատանց,
Մինն՝ գինի, եւ միւսն՝ լեղի,
Դրունք տեսանելեաց ներհակաց,
Մինն՝ ի լոյս, եւ միւսն՝ ի վրիպումն,
Նաւուղք հայեցականաց հակառակութեանց,
Մինն արհարծէ, եւ միւսն շիջուցանէ։
Հայեցուածք դիմաց երկուց,
Մինն՝ ղոյզն ողորմանաց, եւ միւսն՝ անանխայելի բարկութեամբ,
Համբարձումն երկակի բազկաց,
Ոմն՝ ի հարուածս, եւ ոմն՝ ի մերժումն... (բան Լ, գ)։

Եվ այսպես անվերջ...

Այստեղ բանաստեղծական հյուսվածքը իր բացառիկ էմոցիոնալ հագեցվածությամբ, իրոք, հոյակապ է[15]։

Արվեստի այս նույն բացառիկ ուժով բանաստեղծը տվել է մարդու բազմահարուստ ու բազմաղիմի էության, մարդկային ամենատարբեր հոգեվիճակների ամբողջական ու ցնցող պատկերները, որոնք մարդկային հույզի արտահայտման ներքին ուժով, հոգեբանական դիտարկումների նրբությամբ և ճշմարտացիությամբ ցայսօր էլ շատ կողմերով մնում են որպես պոեզիայի չգերազանցված, ընտիր նմուշներ։ Ինչպես դարեր առաջ, հարյուրամյակներ շարունակ, այնպես էլ ժամանակակից ընթերցողին զարմանք է պատճառում, իրոք, բանաստեղծի մտքի փիլիսոփայական խորությունը, երևակայության անսանձ ու վեհաշուք թռիչքը, զգացմունքի անհատնում հորդությունը, բանաստեղծական դինամիկ պատկերի կառուցման ինքնատիպությունն ու գեղարվեստական հնարանքների բազմակերպությունը, խոհի արտահայտման երանգային գերող նրբությունը։

Ինչպիսի՜ վայելուչ հոգեբանական դիտողականությամբ է տվել Նարեկացին, օրինակ, ծովի ալեկոծությունից փրկված, բայց «զարնանազայր գետոց» վայրենի տարերքին հանձնված, «ջրակուլ, ոգեսպառ պղտորարբությամբ» օրհասական վիճակի մեջ ընկած մարդու գեհենական տառապանքների իրապատում ու կենդանի նկարագիրը[16]։

---

15 Հմմտ. Մ. Մկրյան. Գրիգոր Նարեկացի. Երևան, 1955, էջ 207։ դր.

16 Այդ պատկերը ևս, ինչպես «Մատյանի» նկարագրություններից շատերը, այլաբանական բնույթ ունի. այնտեղ պատկերված է տարակույսներից բզկտված մարդկային ոգու տառապալից վիճակը, բայց այս հանգամանքը բնավ չի ստվերում պատկերի արժեքը բանաստեղծական արվեստի տեսակետից։

Եւ քանզի ի ծուխս բազմավտանգս
Ալեւտանշ հողմոյ սաստկապէս ղղուեալ,
Ուժգին լլկանաք խպառ տագնապմամբ ի ծովին՝
Փոխեալ ընկեցեալ ի վտակն վայրենական ողողիւ,
Առ որս զմատունս ձեռացս այոր անդր տարաբերեալ,
Իբր ի հոսանաց բռնութեան գարնանազայր գետոց
Արտաձգեալ յակամայ ընթացս ողորմագին գլորման,
Ջրակուլ, ոգեսպառ պղտորարբութեամբ,
Դաժանահոտ, սկախառն, մամռարմատ, խառնախռիւ,
Մահաբեր երկամբք վանեալ,
Ըստ որոց յուղխիցն հեղեզիցին հեղձուցեալ,—
Այսու առակաւ եւ ես՝ եղկելիս.
Խաւին՝ եւ ոչ իմանամ,
Գոչեն՝ եւ ոչ ինչ լսեմ,
Բարբառին՝ եւ ոչ զարթնամ,
Հնչեն՝ եւ ոչ փոխագրիմ,
Փողեն՝ եւ ոչ գումարիմ,
Վիրաւորիմ՝ եւ ոչ եւս զգամ,
Կոտցն գարշութեան նմանեալ՝
Թափուր յազդմանէ բարեաց իմաստից։
Արդարեւ չար առաւել յաւէտ իսկապէս,
Քան զաւրինակդ ճշմարտութիւնս, ատելի եւ մեղադրելի
Եւ ատենին Քրիստոսի արժանապէս մատնելի[17] (բան ԾԴ, գ)։

Վրձնելու արժանի մի կենդանի, հիրավի, անմոռաց պատկեր է նաև թախծալի հայացքը ծովի ալիքների վրա տարուբերվող, նավաբեկությունից խորտակված իր նավի բեկորներին հառած, «ձեռն ի ծնաւտի եղեալ», աչքերից արցունքի գետեր իջեցնելով իր անդարձ կորուստը ողբացող «նաւուղիղի» հոգեբանական աղետալի վիճակի նկարագրությունը[18], որը «Մատյանի» ամենասրտառուչ ու գեղեցիկ կտորներից է։

Հազիվ թե անհիմն լինի կարծել, որ ինչպես վերը մեջբերված հատվածներում, այնպես էլ «Ողբերգության մատյանի» տարբեր գլուխների համապատասխան պատկերների մեջ յուրովի արտահայտվել է մարդու և բնության դաշնության մտայնությունը—մարդը կարծես հանդես է գալիս որպես բնության բնական շարունակություն, իբրև նրա մեկ այլ դրսևորում։

Միաժամանակ նկատելի է, որ եթե բնության պատկերները Նարեկացու տաղերում սոսկ բնանկարի հանգամանք ունեին, ապա «Նարեկի» մեջ բնությունն, ասես, հանդես է գալիս մեկ այլ, առավել կատարյալ ֆունկցիայով՝ բանաստեղծի խոհերի թարգմանի ու մեկնաբանի դերով, որն ինքնին բնության փիլիսոփայական նորովի ընկալման մեկ այլ յուրովի արտահայտություն է։

---

17 Մեջ բերելով «Մատյանից» այս կտորը, Մ. Մկրյանը նկատել է. «Այս հատվածը, որը նախ և առաջ մի սքանչելի բանաստեղծական համեմատություն է հոգևոր ներքին գրության պատկերման հետ, ընթերցողին ոչ միայն պլաստիկ տեսողական պատկեր է տալիս, այլև ձայնական-լսողական։ Առաջին տողերում, որտեղ խոսքը հողմակոծ ծովի բազմավտանգ ալիքների վրա ընկածի կրած տագնապի ու սաստիկ շարշարանքների մասին է, պարզ լսվում է հողմերի ձայնը՝ Ս, Զ և Ժ բաղաձայներ ունեցող բառերի հաջորդականությամբ («Սաստկապէս ղղուեալ ուժգին լլկանաք...»)։ Իսկ երբ նա վայրկենական հորձանքով բռնված սկսում է խեղդվել՝ իրը գարնանազայր գետերի հոսանքով ակամա տարվող մեկը, այն ժամանակ, վերջին տողերում պարզ լսվում է խեղդվելու ձայնը Ռ, Ռ և Ղ բաղաձայներով հարուստ բառերի հաջորդականությամբ («Սկախառն մամռարմատ խառնախռիւ... յուղխիցն հեղեզիցին հեղձուցեալ»)» (Մ. Մկրյան. նշվ. աշխ., էջ 239)։

18 Այդ պատկերը ևս այլաբանական բնույթ ունի։ Այս մասին տե՛ս Մատեան ողբերգութեան, էջ 1012—1013, ծան. № 2։

Փրկվելու համար համառ ելք որոնող մարդու հոգեբանությանը չափազանց բնորոշ են նրա հոգևկան ներաշխարհը ամբողջովին ալեկոծող ու տակնուվրա անող տարակույսները, որոնց առատությունը պայմանավորված է աստվածային էությանը հասնելու, նրան միաձուլվելու ճանապարհին հանդիպող արգելքները հաղթահարելու դժվարությունների հետ։ Բոլոր դեպքերում մարդու էությունը ցնցող այդ շարունակական տարակույսները խորապես մարդկային են և դրանք էլ վկայում են բանական մարդու հոգեկան հարուստ ներքինի մասին, իսկ մյուս կողմից յուրովի հավաստում են մարդկային գոյի ներհակ բնույթը, որը ևս բնավ օտար չէ մարդկային էությանը։ Մեջ բերենք ամբողջովին հարցումների ձևով կառուցված մի հատվածից հետևյալ կտորը.

Արդ, իցէ՞ ակն ունել նայել զյաւէտ խաբարեալ կերպարան բնութեանս
կրկին հանդերձեալ,
Իցէ՞ արդեօք թէ տեսից զբակտեալ տաղաւար թշուառացելումս
միւսանգամ կանգնեցեալ,
Իցէ՞ արդեօք յուսալի նայել զտարամերժեալ գերիս ազատեալ,
Ապաքէն գուցէ՞ ակն ունել զանկեալս ի շնորհէդ լուսոյ դարձեալ կազդուրեալ։
Արդեօք տեսի՞ց զվայելչութիւն ընտանիդ քո պայծառութեան յողորմութիւն
ինձ երեւեցեալ,
Եթէ տեսի՞ց երբէք զամենատխուր կերպարան հոգւոյս իմոյ ժպտեցեալ,
Արդեօք լուա՞յց ընդ ձայնի դուժիս աւետեաց համբաւ ինձ առաքեցեալ,
Արդեօք տեսի՞ց զբիւրակործան վնասեցեալս անաւթ կազմեցեալ։
Իցէ՞ թէ տեսցեն պատուհանք աչացս իմաստից զմուրհակ պարտուցս
իմոց պատառեալ (բան ԻԵ, գ)։

Եվ հենց այս ոգով ու ոճով էլ շարունակվում է ամբողջ հատվածը։

Այս հատվածը, ի դեպ, առիթ է տալիս խոսելու «Նարեկի», այդ «հոգեշունչ մատյանի» պոետիկայի մի հետաքրքիր հարցի մասին, որ վերաբերում է Նարեկացու և ժողովրդական բանահյուսության կապի, թերևս ավելի ճիշտ կլինի ասել ժողովրդական «լալյաց բանաստեղծություններից» քերթողի կրած ուղղակի ազդեցության մասին։ Բանն այն է, որ «Նարեկի» մի շարք հատվածներ ակնհայտ նպատակադրվածությամբ գրված են նույնահանգ ոտանավորով, քանզի այդ եղանակը, ինչպես ծանուցում է բանաստեղծը, շատ պատշաճում է հորինվածքի ողբական բովանդակությանը, «թախծականացն կերպադրութիւնքին», որով և զգացմունքների արտահայտությունը դառնում է «առաւել սաստիկ մորմոքեալ», ցավագին, «կրկին ողորմելի», լալահառաչ ու սրտաճմլիկ[19].

Եւ արդ, ստուգապէս եւ իրաւարար ընդ որս,
Որք ըստ ձայնից կողկողանաց
Եւ զբանիցն յարմարութիւն հանդերձեն՝
Ի նոյն վիր բերեալ զաւարտմունս տանցն,
Որովք առաւել սաստիկ մորմոքեալ ճմլեցուցանեն
Զաղէտս կարեացն սրտին ըղձից առ արտասուացն բղխմունս,—
Ուստի եւ բաղձեալ իմ ի գլուխս պարու ակմբից դասու այնր երախանաց,
Որք զլալեաց յեղանակեն բանաստեղծութիւն,
Եւ ես ընդ նոսին նոցին հեծութեամբ, աւաղական ձայնարձակութեամբ
Զանձինս տարածանեմ զվշտակրութիւն... (բան ԻԶ, ա)։

Եվ հենց այս, ԻԶ բանի հաջորդ երեք հատվածներում ևս, որոնք գրված են նույն ի հանգով, բանաստեղծն իր վերքոտ սիրտն է բացում տիրամոր

19 Այս մասին տե՛ս Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր. հ. Գ, Երևան, 1968, էջ 615։ Մատեան ողբերգութեան, էջ 1016, ծան. № 1։

առաջ՝ ալեկոծ հոգով ողբալով իր անպատսպար, թշվառ ու աշտաբեկ վիճակը, միաժամանակ հայցելով նրա միջնորդությունը աստծու առաջ՝ հանուն իր փրկության։ «Մայանի» այս և հարանման հատվածները, իրոք, առանձնանում են իրենց էմոցիոնալ բարձր լարվածությամբ, զգացումների արտակարգ շիկացումով։

Մարդու տարբեր հոգեվիճակներն արտացոլող փայլուն հատվածներ էլի՛ կարելի է բերել, որոնք մի նոր ու հետաքրքիր կողմից են բնութագրում «Մատեան ողբերգութեան» խոհափիլիսոփայական, իրոք, աստվածային պոեմը՝ բացահայտելով այդ մոնումենտալ բանաստեղծական հուշարձանի ինքնատիպ հոգեբանական խորքը, հավաստելով նրա արժեքը նաև նարեկացու մարդերգության, մարդու հոգեկան կերտվածքի յուրահատկություններն ըստ ամենայնի ընութագրելու աեսակետից։ Թվում է, թե բավականաչափ հիմքեր ունենք ասելու, որ «նարեկը» իր բնույթով ու բովանդակությամբ միաժամանակ որոշակի առումով մի ինքնօրինակ հոգեբանական ստեղծագործություն է և նաև այս առումով ամենանշանավորը հայ միջնադարյան պոեզիայի պատմության մեջ։

«Ողբերգության մատյանի» այսաեղ վերլուծված ու հարանման արժեքավոր ու հետաքրքրական հատվածները լրացնում, ամբողջացնում և յուրովի առավել պարզաբանում են բանաստեղծի հումանիստական ինքնատեսակ հայացքներն ու պատկերացումները մարդու մասին՝ որպես հոգեկանի ու մարմնալանի մի ներդաշնակ, հոյակապ հրաշակերտի, որպես գերագույն արժեքի։

ВОСПЕВАНИЕ ЧЕЛОВЕКА В ПОЭМЕ «КНИГА СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ» ГРИГОРА НАРЕКАЦИ

Член-корр. АН АрмССР В. С. НАЛБАНДЯН

Резюме

В поэме «Книга скорбных неснопений» Григор Нарекаци (X в.) совершил новое творческое дерзание в направлении «открытия» человека (что, как известно, считается важнейшим достижением искусства и литературы эпохи Возрождения), существенно расширив рамки характеристики человека-личности, обогатив новыми чертами и усовершенствовав философские и эстетические принципы художественной трактовки человеческой сущности. Если в своих замечательных лирических песнях-тагах поэт довольствовался прославлением физических достоинств человека (пока под именем богоматери), то в «Книге скорбных песнопений» основной центр изображения перемещен на отражение сложного духовного мира человека, на «внутреннего человека» (хотя наряду с этим не игнорируется и телесное). Это требовало от поэта не только новых принципов исследования и оценки тайников человеческой души, но и новых выразительных средств для их художественного воплощения. Сущность этих средств, как показывает критический анализ ряда отрывков поэмы, обусловлена основными положениями возрожденческого гуманизма. Поэт воспринимает человека как совершеннейшую частицу природы, как гармоничное единство духовного и физического начал. Нарекаци представляет человека высшим проявлением божественного творения, особо акцентируя силу разума и оценивая человека-индивидуума прежде всего как разумное существо. Из некоторых данных можно предположить, что на формирование взглядов Нарекаци на роль разума человека и своеобразие его физического строения, а также на взаимоотношение этих двух начал оказали определенное влияние античные представления, в частности, философское учение Аристотеля.